Անչափ պահեմ զքեզ անօթի,
Սեւ ակռայեկ ողորմելի.
Գլուխ դնես դու կորկը ու
Ետեւէն լաս դու չոր կոխ:

Տեսնաս ոսպով սպանաս եփած.
Սիրարդ զողայ հետ բակլայի.
Զանկայ կու զարնես լսվիասի.
Հոգիդ զողայ դէմ սըսեռի:

Որ թէ լինիս աղապեկի,
Քապարի խոտ քացիկ.
Գլուխ չունիս տապանճանի.
Հասրաթ լինիս փախլավայի:

Ծեծած ցորենն է քեզ հոգի.
Զայն այլ աղէկ եփած լինի.
Այդ մէկ ապրիկն է պիտանի.
Զայն այլ կ'ասես թէ մեզ պիտի:

Աժնիկ լինիս դու թարխանի,
Որ ի պահուց աւրերն կ'եփուի.
Դու հանդիպիս անեփ ոսպի,
Յետ կեցիր· ակռատ կու ցաւի:

Կ'ուզես որ ակռատ չի ցաւի.
Մի' ուտեր թրթռու կըծու 'ւ ապի.
Այլ դու կ'ուտես ինչ հանդիպի,
Գրնա' քաշէ քեզի պիտի:

Սրանն երեսըն սեւ լինի.
Ահա եղաւ հինգ վեց տարի.
Չետ որ ի բերանս կու հանի
Վա՞յ կու կանչէ խելքս կու անցնի:

Հանց կայ քառասուն յիսուն տարի,
Խեղճս խմաթ կ'ինէ քեզի.
Այս ալմարդին նըսաքի չունի.
Դեռ նախատինք կու տայ մեզի:

Խեղճ ակռայեկ ողորմելի.
Վատ չեմ ուզեր ես այլ քեզի.
Կ'ասեմ խեղճ է քանի կու ցաւի,
Զատ չէ կերեր, կայ վեց տարի:

Գանգատ ունիմ ես այլ քեզի.
Թէ դու տէրն ես այս ակռայի.
Դու մի կենար չատ անօթի,
Երբ որ լուսնայ հայ կեր քեզի:

Ես մեղաւոր Պարսամ դերի.
Որ գակռանիս իմ գովեցի.
Բնաւ գհոգիս իմ չյիշեցի.
Որպէս ճուղապ տամ Քրիստոսի:

Տէր Միքայէլըն Լովեցի
Ցինէն խրնգրեաց, ես գրրեցի.
Ինձ մեղաւոր անարժանի
Դուք ասացէք Տէր ողորմի:

Ձեռագիր Վիեննայի Մխիթ·, թ· 1002, թղ· 190ը—192ա (1654):
Խորագիր չունի Ձեռագիրը:
8 մեաց: 12 ապվեսր: 18 լընու: 31 մէկ մէկ: 34 օր մ': 39 կոաբրաի: 44 դեմ: 54 կեփի: 65 հանս: 67 արդ մորդին: ') չիշեցի: 81 ըն ծովեցի: 84 դու:

## ՕՏԱՐ ԲԱՌԵՐ

Աղապէկ:
Աճամ, ատամ՞պ:
Եախնի, պ· մսով եւ բանջարով եփուած կերակուր:
Էրվէտի (Էրիւթէ՞), տ· գդմաճ, nouilles:
Թարխան(ա), պ· չոր թան:
Իլահի, տ· տա՞ր Աստուած:
Լովիաս, տ· լուբիա:
Խդմաթ, տ· ծառայութիւն:
Հասրաթ, տ· կարօտ:
Հաւաս, տ· փափագ:
Հիլաթ, տ· (իլլաթ), հիւանդութիւն:
Ղազ, տ· սագ:
Ղալի, պ· (գալի), կերակուր (՞):
Ղապուրդայ, տ· (գապուրգա), կոպ· côte:
Ղըյմայ, տ· (գըյմա), կերակուր մանրուած մսով, hachis:
Մաարան (՞), արժանի՞:
Ճուղապ, տ· պատասխան:
Նըսաֆ, տ· (ինսաֆ), խիղճ, դութ:
Պուրանի, տ· (պուրանի), խորովածու, friture:
Պուրէկ, տ· (պէօրէք), կարկանդակ, pâte feuiletée:
Սպանախ, չոմին:
Տապանճան?
Քապար, տ· կապար, capparis, «տակն օգակ ակռային ցաւուն» (Ամիր·):
Քուլինճան?



## ՀՈՆԵԼՈՒԿՆԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ԼԵԶՈՒՈՎ

1· Անճիւր ճեղաց, անկրակ պեղարճ թա խմանաս խէլի պէն ա = երկանաքար եւ մեղրահաց:
2· Սեւ ստանա, պեցրի տան ա, թա խմանաս խէլի պէն ա = ծիծեռնակ:
3· Էրգան աղեք, ծերը ծաղէգ = մոմաճրագ:
4· Մսի պուլիկ, ըրկաթէ սիրիկ = մրակ:
5· Կապիմ կըքինա, թիւլանիմ կինա = տրեխը:
6· Մեզ մինն օնինք մին վընանի, վէր տիւս կը կեա կիւլ կտանի = սունկը:
7· Ալարա, բալարա, տարխաղ ըրա, պեր կախ ըրա = սագը:
8· Դեղին ա զաֆրան չի, կիրած ա, աւեատարան չի = ոսկի:
9· Կուճի թորէն պողաւ լիգը = նուռը:
10· Ըստեղ պուպուղ, ընտեղ պուպուղ, պըչէրկուտուր էղքան էլ պուպո՞ւղ = ջրի փարչը:
11· Մսի գիւլլա, վեղի լիւլա = մուկ եւ իր ծակ ըունը:



12· Սեւ եղնը ալուխեցին, խոխէքը ուրխացին = սանը, երբ վրան հաց են թիսում:
13· Քմակին հոտ տամ արուճ անի = մկրատը:
14· Հոտ տամ հափուաւրս մին, թիւլանիմ տանաւս մին = ճրագի լոյսը:
15· Մոէ կալ, ըրկաթէ կանը = գլուխ եւ ածելի:
16· Կեարմիւր եալլուխ մտաւ լիգը = մայրհաւ:
17· Սեւ եղնը հեաքին ծաղէգ = նաւթի կաւից չենած ճրագ:
18· Տաքին տակին պիւրթ պլոճիկ = մուկը:
19· Էրկու չաթու մին տիհարաւ քցած = ունքեր:
20· Ըստեղան քե թոզիմ = աչք:
21· Սիպտակ դյուզեր, սեւ սեւ էծեր = թուղթ եւ գիր:
22· Լիգը տանեմ, տերդակ հանեմ = գդալը ուտելուց:
23· Ճպռոտ հաւը թառ ելած = գլեռը:
24· Մեծ դաւ ա· վարուել չի, քարերը հմբարվել չի = երկինք եւ աստղեր:
25· Պիծի խոխա չափաը ընես = բիգը:
26· Էրկու ըլբաստարակ մին ձեորըմ ծոնդը դնելիս = ոստայնի երկու չարժական փայտերը:
27· Պիծի պարհան պղնձաւ լիգը = բերան եւ ատամներ:
28· Սեւ հաւը ծկլթաց, ճուն քմական վէր ընդաւ = հրացան եւ գնդակ:
29· Կյարմիւր եղեցէ, անակաւ ավի պեցէ = ճմերուկ:
30· Ալ եղնը, չալ եղնը, հինչքան պեռնիմ տար եղնը = գդալը:
31· Մեզ մինն օնինք ճկլկոտ, չորք վէնը չոր, սերաը ճղած, կլոխը պեց = զարդամը, չորս սիւնով մէջտեղի կրարանը եւ երդիքը կտուրի մէջտեղից բացած:
32· Փորան ալուխիմ, գլվան երա տամ = սանը, երբ ներքեւից մոխրով ծեփում են վրան հացը թիսում:
33· Սեւ եղնը վէր ընդաւ, անրկաւերը չտաւ = խաղողի ճիթը այգեկութին:
34· Մեզ մինն օնինք փորը լիգը, վէգը ծոտ = աղաքսակ:
35· Զաթուն ճիւր խմից, դանին փորն օտաւ = գդմենին եւ դդումը:
36· Էս հի՞նչ ա, հեաքը դյուզ, մարը կէս, տղան չիթ, թոռնը պեղ = խաղողի ճիթը, գինին եւ օղին:
37· Տիւսկուսը վեսկուտ, մեչկուսը մէս = թուխսի տակի ճուն:
38· Տիւսը կոկլէգ, մէջը պրթպրթոտ = մասուրը:
39· Էրկու ութաղ մին սիւնանի = քիթը:
40· Ծնրմ չի ճոտեր ա հանրմ = թուխսի տակ դրած ուրիշ հաւի ճուն:
41· Վարեցի թուրթի, փսաւ հոտի, Հոռան մին ճողնը տիւս ե'կաւ, Վէչ թթեաւ, վէչ հոտի = ջորին:
42· Կիւմաչը գեալիմը, հեաքին չալիմը = ջերեփը կաթսայի մէջ:
43· Փաղի կիւչ, քարի փրթիւչ = կամին:
44· Վարիմ հաճար, փանի պենջար, Շոչ տա չմալ, տեղին կճոճ = գդումը:
45· Կա թիս, կա թիս, անրմը տամ գիղաս վէչ = թին (թիակը):
46· Մեզ մինն օնինք, աչխարքս կալրակի կըկեա տանը վէր կընգնի = մանգաղը եւ գերանդին:
47· Պիծի խոխա գնդլէ տայիս = լեղուն:
48· Կեարմիւր պոլիգ, սեւ սիրիկ = մահասուր:
49· Զորանը սարին, կիւչը կտարին, Զոմաղը քմակըմը, խոխէքը փորումը = խաչխաչի գլուխը:
50· Էրգան էլիկ, տոճիկ վէստ = կաչաղակ:
51· Մին կիւմ տաւար, մին կապաւ կապած = խաղողի ճիթը իր կոթով:
52· Ղահրըմանը չոքից, Շահրըմանը եր ելաւ, եափընջին չոռ կալաւ = կապարանքը, կաթսան վրայի եւ նրա խփանը:
53· Կանանչ ներկիմ, սիպտակ հինիմ, կեարմիւր թիլ տամ, թոխ կորկիմ = մոչը ծաղկած, ժուռ եւ հասած ժամանակ:
54· Մին կիւմ տաւար, հեաքին ծաղէգ = կտաւատ:
55· Էրգան չմալ, չոք չոնի = ձայնը:
56· Հիլիվէրը չոլըմը պըլըմնէն կրակըմը = փուքքը:
57· Էս հի՞նչն ա, լիւս ըրա քթիր, նի պրանի = կայծակ եւ որոտում:
58· Կլխան վառիմ տական եվի = գալեանը:
59· Կուճի աման կորկաւ լիգը = թուղը:
60· Էրգան հղէ, փորը լղէ = օճը:
61· Էրգան մարթ, կեարմիւր մրոք = գամիչ (եղեգն):
62· Են հի՞նչ ա սաղը մեռածին չելակ տւած = վագի նեցուկի կապած:
63· Սեւ ստանա հեաքին կէս = հացի ծհանը (հացհանը):
64· Մեզ մինն օնինք էրկու ձեռքաւ ծավ տայիս = երկանք:
65· Խոխան վէնը (կանգնած), տափը վազ տաս = ջրազացի չանչախը եւ քարը:
66· Նախչուտ սանդուղ, քլլանը ծուպավեր = աչք եւ արտեւանունք:
67· Գուճուր Աստուծ ձիւն ա կեամ = մաղ:
68· Կուճի մոլլա', էծերը սարան վեր ըրա կեա = սանրը սանրելիս:
69· Քչերաւ քըրճանա պարկերքս տափին կեամ = քիթ սրբելը:
70· Փաղի ձի, մսաւ պեռնած = օրօրոց երեխայով:
71· Սեւ կիւմաչ քիւրսուն նստած = զանը կասկարանքի վրայ:
72· Մին թումբ տեղ, թումբին տակին մին

© National Library of Armenia

դիւզ տեղ, դիւզին տակին էրկու ծառ, էրկու ծառին տակին էրկու գեօլ, էրկու գեօլին տակին էրկու նով, էրկու նովին տակին մին ճեղաց, ճղացին տակին մին թումբ = գլուխը (ճակատը աչքերը, քիթը եւ այլ մասերը)։

73· Վէններ չոնի, քինըմ ա, պերան չոնի, կոլ ա տամ = գեռը։

74· Ագռաւը քինըմա լխլխալիս, ճոտերը հետան ծվծվալիս = մեռելի տանելը։

75· Եր ինիմ ծառը, ձէն տամ ձեորը, մեռած մարթին կենդանութիւն = աքաղաղի կանչոցը։

76· Տափակը տփակին, էրգանը ծակին = աղօրիք ձեռքի, երկանք փայտի կոթով։

77· Ինքը քաղցը ա, ամմա օտվել չի = քունը։

78· Մին քէթ օնի, քառասուն աչք = տրեխը։

79· Մաղը քաշիմ սարը կեա = ուղտի վրից կապած թոկը (նոխտան)։

80· Էս հի՞նչն ա ամեռնը կապըմ ըն, ձմեռնը ետ անըմ = չորաթանը։

81· Էս հի՞նչ ա, ծոռ կըեչի, դիւզ կը քինա = գութանը։

82· Կըռմեռ հեաքի հչտը՞դանըս կեամ, ծովան ըմ կեամ, բա խէ՞ ցամաք ըս, տահան ըմ կեամ = զալեանի ծուխը։

83· Ձեռքաւ փոնիմ, փաղաւ կտրիմ = ջրաղացի ջուրը։

84· Կլոխը կարեցի, սերաը հնեցի, ջուրտվի խմեց խօսել սկսեց = փետուրի գրիչը։

85· Անջուր տեղ ծառեր փռած, ճղներ օնի, տերեւ չոնի = մարալի եղջիւրները։

86· Լոխճու կեց ա տամ ղրթարըմ, ամմա ինքբէլհա տկլորա = ասեղը։

87· Մթէն տոն, հարամին մեչին քոն = հրացանը գնդակով։

88· Ծիք տամ նի քցիմ, ծիք տամ տիւս քցիմ = երկայն կօշիկներ։

89· Գեոդ եղնը փախավ, կեարմիւրը ճնաց նստած = կրակը։

90· Էն հի՞նչ ա, վէր կտոց օնի, կլոխ չոնի = սիւլուկը։

91· Էն հի՞նչ ա, թեւեր օնի թեփուռ չոնի = գիշերամուկը։

92· Սեւա, ադռաւ չի, թռչըմա, ղուշ չի, վէտ (հոտ) ա գիդըմ թուլա չի = բզէզ։

93· Դլվին հարիմ, արուճ անի = մկրատը։

94· Լպտիմ ծակնի եր տամ = թելը ասեղ անցնելուց։

95· Պկին հոփ տամ, փորը թափիմ ծվծվա = սաղը, թառը։

96· Աքտըմ, բաքտըմ, քեաքիւլատ փոնիմ ծիք տամ = գաղաբը, բողկը, ճակնտեղը։

97· Սարին գլխին խոտըմ հարում, խորում խորում թուլուլ տամ, վէչ մին հեյվան նեստա մուտանըմ չի = գլխի մազը խուզելուց։

98· Կեարմիւր եալլուխ պողաւ լիգը = նուռը։

99· Մսի չանթա պրինձաւ լիգը = բերանը։

100· Մսի լիւլա, ըրկաթի գիւլա = լյուլա քեաբաբ։

101· Քշերը գեադա, ցիրեկը աղա = վերմակը, դոշակը։

102· Ցիրեկը գեադա, քշերը աղա = աւելը։

103· Մեզ մինն օնինք իրեք վընանի, վէր նի կը կեաս վա՛յ վա՛յ կանի = դաշնամուրը։

104· Էա հի՞նչ աման ա փրսը վէր տինիմ լցնի, պօրը ետ տինիմ տօտակվի = գլխարկը։

105· Լիւզուն մէջքին, հինչ վէր ասի կհվատաս = կշեռքի միլը։

106· Մեզ մինն օնինք օխտը շիւղվանի, կեռէք չոնի մարդ կրկծի = բանջարը, աղինջը։

107· Մեղրան քաղցը, արկաթան ծանդը, վէչ դյուքանըմ կծախվի, վէչ բաղարըմ կառնվի = քունը։

108· Գլխին կրակ, կրակին տակին խոտ, խոտին տակին փաղ (փայտ), փաղին տակին ջուրը պլթպլթըմ ա = զալեանը։

109· Տափան պեցուր տոն չինած, վէչ տոռնը օնի, վէչ ակուչկա = չերամի բոժոժը։

110· Էն հի՞նչ տոն ա, չինողն ուրախանա, մէջը մանողը չիմանա, հարուստն ու աղքատը ունենա = դաղաղը։

111· Լուն թռաւ կարպետին, ձէն տվաւ վարպետին, ձէնը քինաց Հնդստան, ինքը մնաց ձեռին = հրացանը խփելուց։

112· Վէչ չիթ ա, վէչ շալ ա, ինքը անծալվըծալ ա, մէջի նստողը անհամար ա = երկինքը աստղերով։

113· Խալիչա օնիմ թափ տալ չի լինիլ, վէսկի օնիմ հմբարել չինել = երկինք եւ աստղեր։

114· Նեղ քյուչ ա, մէջը փուչ ա = հրացան։

115· Փտած փտոը փորեցի, ասլանը մէջը թաղեցի = թուրը։

116· Ալաս փալաս, անըմը տամ չիմանաս = փալասը։

117· Իրեք հուքի կարմունջաւ անցկացին. մէկը տեսաւ, ոտքով անցաւ, միւսը տեսաւ անոտք անցաւ, երրորդը ոչ տեսաւ, վոչ էլ ոտքով բայց անց կացաւ = մայրը, յղի որդին չալակած։

118· Սեւ սալ ա, սիպտակ սալ ա, մէջինը կրպլրպլա = աչքը։

119· Հենդ ախպերք ըն, մինը ցեխ ա կրում, չորսը պատն դնում = դուրբա գործելու ջաղերը։

120· Էս անկիւն լիւղ տա, էն անկիւն լիւղ տա քինա պատին դոչ տա կաղնի = աւելը։

121· Հեաքվան փոնիմ տափաւը տամ = խլինք։

122· Վարիմ հաճար, փանի պենջար, չոչ տա չմալ, դեղեն կճոճ = դղմենին։



123· Օրաղաւ թիեցի եօնջին, ձէնը քինաց Գեանջին = որոտում։

124· Էն հի՞նչ ա վէր մեչեն ա հոնըմ = ձմերուկը։

125· Վազ ա վազ ա, կեոտին հարիւր կեղ ա = վիլատու (ոստայնի)։

126· Էրգան չմալ չոք չոնի = ձայնը։

127· Լիւս ըրա քթիր նի պրանի = կայծակի հարուածները։

128· Երգինքը հով, գետինքը ծով, եղնը ծնից կով = Ադամից Եւան։

129· Քշերաւ քշերհանա ձեր դռանը հյուրատիմ = չմուչքներ (կօշիկ)։

130· Իմ հօր տղան իմ աղբեր չի = խորթ եղբայրը։

131· Մին փոսի երա հարիւր փոս = մատնոց։

132· Մին ծառ օնիմ տասներկու ճղնանի, մին ճղանը իրեսուն տերեւ, տերեւին մինը սեւ, մինը սիպտակ = տարի, ամինը սեւ, մինը սիպտակ = տարի, ցերեկ եւ գիշեր։

133· Ծովան մին ղուշ ա տիւս կեամ, վէչ մէս օնի վէչ արիւն = չունչը։

134· Վէր քաշիս չաթվատ չի կեալ, ամմա վէր պցրցնիս, ամալ չի կեալ = կրակը։

135· Հեարը օրուրոցըմը, տղան քինաց բաղար = վարունգը։

136· Էն հի՞նչ ղուշ ա, վէր վէննը ծոնդնան պեցուր ա = մորեխը։

137· Էրկու բաղեա մածնըմ մին մին վէթէս = աչքերը։

138· Մեզ մինն օնինք կկոսըցնինք կը խօսի, ամմա վէր մորթինք արիւն չի կեալ = դուռնան։

139· Էծը եր իլաւ քարը, քարը կերաւ, եղ չռեց պաներ թրքեց = ձէթը ձիթկան քարի տակից եր քուսպով։

140· Էս հի՞նչն ա, վէրքան տաշըմ ըմ հստանըմ ա, վէրքան կորըմ ըմ իրգընահըմ = ջրհորը։

141· Էն հի՞նչն ա, ջուր կխմի կիւզել չի = հաւը։

142· Ըշխարքիս տակին մին մարդ, ըռաջին մին սինի, սինուն մաչին մին դմակ, դմակին մաչին մին տենակ, հինչքան կորըմա, վէչ տմակն ա կլխըմ, վէչ սինին ա լցնվում = երկրագունդը մէջի մեռնողներ եւ ծնուողներ։

143· Էրգան ա սաթի նման, պոչը խաչ երկաթի նման = կաչաղակ։

*հաւաքեց*

*Կ. Կ. ՄԷԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՑ*

*1874—1920։*

# ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՔ

## ՍՏԵՄՊՕԼՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

## ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻԻ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆ

—

### ԳԼՈՒԽ Զ.

*(Շարունակութիւն։)*

*Տող 385։*

*«Ծովեզերօքս ի վեր զընամք՝*
*Մինչ հասնիմք ի Գուռի չէշմէն այն»։*

*Տող 386։*

*«Գուռի չէշմէ գիւղս ելցուք...»*

*Տող 390։*

*«Զիք տաճիկք, Հայք ժամատամք՝*
*Ցոյնքն քիլիսաւ սուրբ տիմեղրիան»։*

Օրթագիւղէն մեկնելով կու գան Գուռուչէշմէ (չորաղբեր) գիւղը, որուն համար կ'ըսէ թէ «Հայեր կան հոն ժամատունով մը», ուրկէ կարելի է գտնել թէ 1661—1680 տարիներու միջոցին արդէն հոն հայկական մատուռ մը գոյութիւն ունեցած է ուստի եւ Հայ բնակչութիւն։

Այս մատուռը վերաշինուած է 1798ին, որովհետեւ Սարգիս Դպիր Սարաֆ Յովհաննէսեան իր Տեղագրութիւն Ստամպուլի ձեռագիր աշխատութեանը մէջ այդ մասին կ'աւանդէ հետեւեալը։

«Եւ յետ Մէֆթէրտարին է գիւղն այն, որ կոչի Գուրուչէշմէ։ Գոյ ի գիւղի աստ եկեղեցի մի Հայոց՝ յանուն Երեւման Խաչի, որ ի հիմանէ քակեալ շինեցաւ ՌՄԽԷ (1247 + 551) 1798 փետրվարի ԻԷ։ եւ օծեալ ձեռամբ Յովհաննու արհի եպիսկոպոսին, կոչեցաւ Ս. Խաչ ըստ առաջին անուանակոչութեան իւրոյ։»

Այս եկեղեցիին յիշատակութիւնը Հ. Ղուկաս Ինճիճեան ալ իւր «Ամարանց Բիւզանդեան»ին մէջ[1] կը գրէ սապէս՝

*«Իսկ եկեղեցի՝ Հայկական ազգին,*
*Ի մէջ բընիկ գեղջ՝ յանուն սուրբ խաչին»։*

Իսկ վերաշինութեանը համար Գիւտ Քահանայ Աղանեանի «Դիւան Հայոց պատմութեան»[2] մէջ կը կարդանք սապէս,

[1] Ամարանց Բիւզանդեան, Վենետիկ 1794, էջ 128։
[2] Դիւան Հայոց պատմ., Գիրք Գ. էջ 463։

© National Library of Armenia